Բարինած է Նոր բուսագիտութիւն անուամբ դասագիրք մը Ա. եւ Բ. հատ. (տպ. 1881, Երուսաղէմ)։

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ, ՊԱՐՏԻԶԱԿՑԻ.— Մբ. Ծ. 1850ին. աշկ. Ս. Փրկչի վարժարանին Պոլիս. Զո. սրկ. 1871ին. (Սիօն, 1871, էջ 168). 1875ին կը մեկնի վանքէն. քարտուղար ազգ. պատրիարքարանի (1875—77). այցելած է Պոնտոս, Կաբին, Պայազիտ և Ռուսաստան (1879—81) Թոխատ և Մարզուան (1882—86). Աթէնք և յունական կղզիները (1887—1888). վարած է կրթական, վարչական և առաջնորդական պաշտօններ։ Կը վախճանի 1909ին Պոլիս։ Իր երկասիրութիւնները հետեւեալներն են. Դագիկ վերջին արքայ հայոց Բագրատունի, թատերգութիւն ի հինգ արարուածս (տպ. 1875, Երուսաղէմ), Խոսք զհայրենեաց (տպ. Պոլիս). Հայ Թիանակ առակք, երկհատոր (տպ. Պոլիս, 1883). Խօսնակ Հայաստանեայց եկեղեցւոյ. հրատարակութիւն Կրօն. ժողովոյ, խմբագրութեամբ Վ. վրդ. Տէր Մինասեանի (տպ. Պոլիս 1888). Անգիր դպրութիւն եւ առակք (տպ. Պոլիս, 1893). Աշխարաբար Աւետարան եւ մեկնութիւն (տպ. Պոլիս. 1894). Արեղածագ. ժ. տեսրակներ (տպ. Պոլիս, 1894)։ Արտնաստր Լոյս կրօնաթերթի (տպ. Պոլիս, 1905—1906)։

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՔԷՇԻՇԵԱՆ, ՍԵԲԱՍՏԱՑԻ.— Մբ. Ծ. 1860ին. Զո. 1889ին. ՏԴ. (1903—6). անդամ Տն. ժողովի 1906ին. ՏԼ. 1907ին. ՏԲ. (1908—1910). Լսպ. 1908ին. քարգման (1911—1915). Կը վախճանի 1915ին։

ՎԱՀԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ, ԱՃՆԹԱՊՑԻ.— Ծ. 1863 դեկտեմբերին Հալէպի մէջ. աշկ. Այնթապի Ներսէսեան և Կիլիկիոյ գիշերօթիկ վարժարաններուն, ընթացաւարտ Կեդր. Թուրքիոյ գոլէճէն 1884ին. հետեւած է մանկավարժ. դասընթացքներուն Լոնտոն, British and Forign School Society ի մէջ (1884—1887), կարգուած է Տնօրէն Վարդանեան կրթարանին Այնթապի (1888—1890). հիմնադիր Տնօրէն Կիպրոսի Ազգ. Կրթարան—Որբանոցին (1896 — 1904). Տնօրէն Գալուստեան Ազգ. վարժարանին Պահիրէի մէջ (1905 — 1907). 1907ին կը փոխադրուի Պոսթոն եւ կը հետեւի փիլիսոփայական ուսումներու համար՝ Հարվըրտի համալս. գիշերային դասընթացքին. ընթացաւարտ Պոսթոնի համալսարանին իրաւագիտ. ճիւղէն 1910ին։ Անդամ Մէսէջու-